ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՐ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Երևան

Գոհունակ սրտով շնորհակալություն ենք հայտնում Ձեզ ջերմ հեռագրի համար Մեր ծննդյան տարեդարձի առթիվ:

Զգացված ենք Ձեր բարի մաղթանքների համար: Տիրոջ ողորմությամբ պիտի շարունակենք Մեր պարտքը կատարել մեր ժողովրդի հանդեպ՝ մեր նպաստը բերելով նրա արդար իղձերի իրականացման ճանապարհին, ազատ ու ինքնիշխան մեր հայրենի պետության հովանու ներքո:

Հուսով ենք, որ այս նոր պայմաններում նոր ծաղկում պիտի ապրի նաև մեր ազգի Մայր Եկեղեցին Ձեր անմիջական գործարար աջակցությամբ:

Այս առթիվ ընդունեցեք Մեր քաջալերանքը և օրհնությունը Ձեզ և ձեր հայրենի նորակազմ կառավարության:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
21 սեպտեմբեր 1990 թ.